Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը)։

Դատարանն արձանագրում է, որ <<Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ>> ՍՊԸ-ի և <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի միջև 05.08.2024 թվականին կնքվել է թիվ 01-8/24 հանձնարարության պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ սույն հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է վճարել 600.000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ (...)։

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը կազմել է հայցադիմում, գործը քննվել է գրավոր ընթացակարգով։

Դատարանն ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով հայցվոր կողմի փաստաբանի խելամիտ վարձատրությունը կազմում է 120.000 ՀՀ դրամ, ուստի պետք է ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանից հօգուտ <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի բռնագանձել 120.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար։

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանի՝ 20.06.2024 թվականին կնքված թիվ ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը և 22.07.2024 թվականի <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել։

անվավեր ճանաչել ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի 12.07.2024 թվականի ծանուցմամբ 20.06.2024 թվականին կնքված թիվ ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումը։

անվավեր ճանաչել <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի 22.07.2024 թվականի N 1498-Ա որոշումը։

2. ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանից հօգուտ <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես

նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանից հօգուտ <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի բռնագանձել 120.000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am